ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

21 հուլիսի 2022 թվականի N 1111-Ա

ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐՈՒՄ ՆՇԱՆԱԿԱԼԻ ՆՎԱՃՈՒՄՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻՆ ՇԱՐՔԱՅԻՆ ԿԱԶՄԻ ՊԱՐՏԱԴԻՐ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԱՄԱՌԱՅԻՆ ԶՈՐԱԿՈՉԻՑ ՏԱՐԿԵՏՈՒՄ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 22-րդ հոդվածի 5-րդ մասի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի N 451-Ն որոշմամբ սահմանված կարգի 6-րդ, 7-րդ, 8-րդ և 9.1-ին կետերի՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության 2022 թվականի ամառային զորակոչից տարկետում տալ կրթության և գիտության բնագավառներում նշանակալի նվաճումներ ունեցող և բակալավրի (դիպլոմավորված մասնագետի, ինտեգրացված) կրթական ծրագրով սովորող (կամ դիմորդ հանդիսացող) քաղաքացիների՝ համաձայն N 1 հավելվածի:

2. Շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության 2022 թվականի ամառային զորակոչից տարկետում տալ կրթության և գիտության բնագավառներում նշանակալի նվաճումներ ունեցող և մագիստրատուրայի կրթական ծրագրով սովորող (կամ դիմորդ հանդիսացող) քաղաքացիների՝ համաձայն N 2 հավելվածի:

3. Շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության 2022 թվականի ամառային զորակոչից տարկետում տալ կրթության և գիտության բնագավառներում նշանակալի նվաճումներ ունեցող և ասպիրանտուրայի կրթական ծրագրով սովորող (կամ դիմորդ հանդիսացող) քաղաքացիների՝ համաձայն N 3 հավելվածի:

4. Սահմանել, որ սույն որոշման N 1 հավելվածի 1-ին կետի 3-րդ ենթակետով Միքայել Հովհաննեսի Գրիգորյանի, 4-րդ ենթակետով Խաժակ Յուրիի Առաքելյանի, 7-րդ ենթակետով Տիգրան Գոռի Նահապետյանի, 8-րդ ենթակետով Հարություն Գառնիկի Թորոսյանի, 9-րդ ենթակետով Աբգար Նարեկի Հարությունյանի, 10-րդ ենթակետով Նարեկ Հրանտի Դարբինյանի, 11-րդ ենթակետով Դավիթ Արմենի Շահբազյանի, 2-րդ կետի 3-րդ ենթակետով Կարեն Հրաչի Այվազյանի, 8-րդ ենթակետով Արթուր Արամի Աղամալյանի, 10-րդ ենթակետով Էրիկ Արմանի Այվազյանի, 12-րդ ենթակետով Գոռ Հովհաննեսի Էլբակյանի, 14-րդ ենթակետով Հայկ Վահանի Փիլիպոսյանի, 15-րդ ենթակետով Գոռ Դավիթի Հարությունյանի, 16-րդ ենթակետով Աղասի Սահակի Սահակյանի, 17-րդ ենթակետով Ռազմիկ Արմենի Հարությունյանի, 18-րդ ենթակետով Հայկ Արմենի Բալասանյանի, 22-րդ ենթակետով Էդուարդ Դավիթի Ավետիսյանի, 25-րդ ենթակետով Դավիթ Գնելի Գևորգյանի, 26-րդ ենթակետով Ստեփան Սերգեյի Հարությունյանի, 34-րդ ենթակետով Դավիթ Արմենի Մկրտչյանի, 35-րդ ենթակետով Հրանտ Արմենի Պողոսյանի, 36-րդ ենթակետով Էրիկ Միքայելի Հակոբյանի, 40-րդ ենթակետով Ալեքսանդր Միքայելի Միքայելյանի, 42-րդ ենթակետով Նարեկ Վախթանգի Առաքելյանի, 3-րդ կետի 2-րդ ենթակետով Հարություն Մարտիրոսի Գրիգորյանի, 4-րդ ենթակետով Լևոն Կարենի Յավրումյանի, 5-րդ ենթակետով Արսեն Գեղամի Մադանյանի, 7-րդ ենթակետով Վանիկ Գևորգի Գևորգյանի, 10-րդ ենթակետով Լևոն Կարենի Գրիգորյանի, 16-րդ ենթակետով Էդվարդ Սերգեյի Հովհաննիսյանի, 18-րդ ենթակետով Անդրեյ Սամվելի Վարդանյանի, 20-րդ ենթակետով Դավիթ Արամի Հարությունյանի, 21-րդ ենթակետով Հայկ Կարենի Կարապետյանի, 24-րդ ենթակետով Լևոն Արմանի Պետրոսյանի, 25-րդ ենթակետով Հայկ Արթուրի Խաչատրյանի, 26-րդ ենթակետով Նարեկ Արմանի Հարությունյանի, 27-րդ ենթակետով Նարեկ Վլադիմիրի Կարապետյանի, 28-րդ ենթակետով Համլետ Միհերի Աբրահամյանի, 35-րդ

ենթակետով Էդուարդ Գագիկի Երիցյանի, 36-րդ ենթակետով Ռուբեն Բագրատի Հարությունյանի, 40-րդ ենթակետով Դավիթ Անդրանիկի Մելիքջանյանի, 44-րդ ենթակետով Գրիշա Կարենի Թամազյանի, 46-րդ ենթակետով Մարտին Հրաչյայի Ասցատրյանի, 4-րդ կետի 1-ին ենթակետով Հարություն Գուրգենի Հակոբյանի և 2-րդ ենթակետով Մարկ Արմանի Սարգսյանի, 5-րդ կետի 1-ին ենթակետով Հայկ Վարդանի Հովսեփյանի, 3-րդ ենթակետով Էդմոն Վրեժի Խաչատրյանի, 7-րդ ենթակետով Սպարտակ Էդգարի Միքայելյանի, 6-րդ կետի 1-ին ենթակետով Աշոտ Լենդրուշի Թումաղյանի, 2-րդ ենթակետով Արամ Միհերի Մկրտումյանի և 7-րդ կետում ընդգրկված Տիգրան Մամիկոնի Հարությունյանի մասով սույն որոշումն ուժի մեջ է մտնում նրանց 18 տարին լրանալուց հետո:

5. Սահմանել, որ սույն որոշման N 1 հավելվածի 1-ին կետի 2-րդ ենթակետով Արեն Արտակի Նահապետյանի, 12-րդ ենթակետով Սարգիս Լևոնի Ամիրջանյանի, 2-րդ կետի 1-ին ենթակետով Հայկ Դավիթի Պողոսյանի, 2-րդ ենթակետով Վռամ Վարդգեսի Պապյանի, 6-րդ ենթակետով Գոռ Գուրգենի Մելքոնյանի, 9-րդ ենթակետով Սամուել Դավիթի Դարբինյանի, 13-րդ ենթակետով Միհեր Արթուրի Մխիթարյանի, 19-րդ ենթակետով Սարգիս Սահակի Սարգսյանի, 30-րդ ենթակետով Տիգրան Միհերի Ավետիսյանի, 37-րդ ենթակետով Գեորգի Նիկոլայի Ալիխանյանի, 39-րդ ենթակետով Սահակ Ահարոնի Լևոնյանի, 3-րդ կետի 11-րդ ենթակետով Ռազմիկ Արմենի Վարոսյանի, 12-րդ ենթակետով Սուրեն Արամի Ղազարյանի, 19-րդ ենթակետով Վահան Արթուրի Թադևոսյանի, 30-րդ ենթակետով Հակոբ Շահենի Շահինյանի, 41-րդ ենթակետով Ալեքսանդր Ռուբենի Աբելյանի, 43-րդ ենթակետով Արթուր Արմանի Մարտիրոսյանի, 45-րդ ենթակետով Ջորդի Ահարոնի Մուրադյանի, N 2 հավելվածի 2-րդ կետի 2-րդ ենթակետով Հովհաննես Վրեժի Ջիջյանի, 3-րդ կետի 5-րդ ենթակետով Վահե Գրիգորիի Կարագուլյանի, 6-րդ ենթակետով Հայկ Պարգևի Հարությունյանի, 4-րդ կետի 2-րդ ենթակետով Հայկ Վահանի Գեղամյանի, 3-րդ ենթակետով Վահան Վահանի Գեղամյանի, 6-րդ ենթակետով Դավիթ Գևորգի Գևորգյանի, N 3 հավելվածի 1-ին կետի 2-րդ ենթակետով Էդուարդ Նվերի Պետրոսյանի, 4-րդ ենթակետով Խաչատուր Գարուշի Նազարյանի, 8-րդ ենթակետով Միհեր Գագիկի Վարդանյանի, 14-րդ ենթակետով Տաճատ Արտյոմի Պապոյանի, 52-րդ

ենթակետով Հրաչ Յուրիի Այունցի, 53-րդ ենթակետով Սուրեն Գագիկի Թադևոսյանի, 54-րդ ենթակետով Գրիգոր Գեղամի Գևորգյանի, 55-րդ ենթակետով Նարեկ Տիգրանի Թումանյանի, 73-րդ ենթակետով Կարեն Սամվելի Մկրտումյանի, 77-րդ ենթակետով Էդուարդ Անդրանիկի Հարությունյանի, 78-րդ ենթակետով Հարություն Արմենի Մաթևոսյանի, 83-րդ ենթակետով Անդրանիկ Արտակի Գալստյանի մասով սույն որոշումն ուժի մեջ է մտնում նրանց այլ հիմքով ստացած տարկետումը դադարելու օրվանից:

6. Սահմանել, որ սույն որոշման NN 1, 2 և 3 հավելվածներում նշված քաղաքացիների համար սույն որոշմամբ տրված տարկետումներն ուժի մեջ են մտնում մինչև 2022 թվականի սեպտեմբերի 30-ը ներառյալ իրենց զինվորական հաշվառման վայրի զինվորական կոմիսարիատներ ներկայացված՝ համապատասխան կրթական ծրագրով ուսումնառության ընդունվելու (հրամանագրվելու) վերաբերյալ ուսումնական հաստատության կողմից տրված տեղեկանքի հիման վրա (իսկ ընդունելության ավելի ուշ ժամկետների դեպքում՝ տվյալ բուհից տեղեկանք ընդունվելու ժամկետների մասին): Եթե մինչև 2022 թվականի սեպտեմբերի 30-ը ներառյալ սույն որոշման NN 1, 2 և 3 հավելվածներում նշված քաղաքացիներն իրենց զինվորական հաշվառման վայրի զինվորական կոմիսարիատներ չեն ներկայացնում համապատասխան կրթական ծրագրով ուսումնառության ընդունվելու (հրամանագրվելու, կամ ընդունելությունը ավելի ուշ լինելու) վերաբերյալ ուսումնական հաստատության կողմից տրված տեղեկանք, ապա նրանք համարվում են սույն որոշման շրջանակներում տարկետման իրավունք չունեցող և ենթակա են պարտադիր զինվորական ծառայության՝ հայտարարված 2022 թվականի ձմեռային զորակոչի ընթացքում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

21.07.2022
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ